նկարուած հայ կեանքին։ Սքանչելի են դերակատարները․․։ Աննա միշտ խնամոտ մայր, խնամոտ պահապան իւր ամրոցին, խնամոտ հոգածու իւր մէլքութեան՝ հաստատամիտ է, եւ այրական հաստատամտութեամբը չի թողնար Մէլիք-Աւանին խոհեմութեան առջեւ, վասն զի տան, ազգատոհմի, հասարակութեան պատիւը վտանգեալ է։ Այս ճարտար կնոջ տիպարը կը ներկայանայ՝ սուր ի ձեռին, գիշերական արշաւանքին մէջ։

Բարոյակա՞նը։ Նահապետական հայ ազգատոհմի հնաւանդ քաջագործութեան պատկեր․․․։ Բայց արի՛նը. էհ, պատերազմ է՝ կ'ըսուի, պատերազմ տկարի ընդ բռնագունի. կը միայ նախ որոշել պատերազմին արդար ըլլալը կամ ոչ․․։ Ինքնապաշտպանութիւնն ամենէն արդար պատերազմն է, թէեւ ի մանրանկարի։ Զօրաւոր է Լէօ դերեր բաժնելու մէջ, բաժնելէն ետքը դերերը զարգացընելու մէջ։ Համոզուած է իւր «Հերոսին» մտաց արութեան վրայ, որ վիճակահանութեան տխուր գուշակութենէն սկսեալ (20)՝ մինչեւ հարսանեաց վերջին գիշերը կը մեծնայ, կ'ընդարձակի, կը գրաւէ ու կը — յուզէ։ Բայց այս յաղթութեան մեծութիւնը հասկընալու համար պէտք է միայն — «Մէլիքի աղջիկն» ըլլալ. սակայն Լէօ զգացած է՝ այն հոգեկան բուռն պայքարներու ահագին դէպքը. գրիչը կը նկարէ ինչ որ կը զգացուի ու — չի զգացուիր․․․։

Իսկ լեզո՞ւն։ Հրաշալի ստորագրութեանց կոյտ մը, որ կը մատնէ կարճ նմանութիւններով՝ Լէօի բնապատմական ծանօթութեանց պաշարը։ Քանի մը տեսարաններու մէջ մարդ կը շուարի որոշելու թէ նի՞ւթը գեղեցկութիւն կու տայ գրչի՞ն, թէ գրիչը՝ նի՛ւթին․․․ յամենայն դէպս երկուքն ալ շատ յարմար են իրարու։ Կրակ ու բոց է գրիչը, ուր հոգեկան ու նիւթական — հուր կայ, եւ այս վէպը՝ ընդդէմ իւր ձմեռական եղանակին,՝ մշուշին ու մառախուղին, միշտ հուր է. — ամոքիչ է միայն հո՛ն, ուր կը վառէ հուրը։

«Յո՞ երթաս»ը մեր թարգմանածոյ վէպերուն ստուարագոյնն է այս տարի, իսկ «Մէլիք-Աղջիկը» ինքնագիր վէպերու հսկաներէն։ Գայլիանէններու դարը պէտք է այսօր, եւ թող Լէօի գրիչը ցոյց տայ դարուս շատ մը Գայլիանէններ․․։

Հ. Գ. ՄՆՆ.

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԻՆ ՄԷՋ

«Հանդէսի» Մայիս թուին մէջ նկարագրած ենք թէ 1898ին՝ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր 50ամեայ գահակալութեան առթիւ մեծամեծ հանդէսներ ու տօներ կը կատարուին այս տարի ի Վիեննա։ Յոբելեանին բուն օրն է Դեկտ. 2, եւ ոչ՝ ինչպէս հայ թերթերու մէջ կարդացինք, Մայիս 7, այս վերջինս բացման օրն էր Ցուցահանդիսին, որուն պիտի նուիրենք այս անգամ քանի մը տող։

Անձի մը մեծութիւնը կը չափուի իւր գործածներէն։ Եթէ ստոյգ է այս վճիռն, այն ատեն դիւրաւ կը հասկընանք, թէ ինչ բարեդէպ խորհուրդ մըն էր այս Ցուցահանդէսը, որ «իւր ի հայելւոջ» կը պատկերացընէ՝ աւստրիական ցպին տակ գումարեալ մեծ ու փոքր ազգերու եւ ազգութեանց 50ամեայ յառաջադիմութիւնը։ Բնական է թէ ճշմարիտ զարգացում միշտ վերէն՝ տէրութեան գլխէն կու գայ։ Եթէ անտարբեր է գլուխը, միշտ կաղն ի կաղ կ'երթայ յառաջադիմութիւնը. հարկ չէ ըսել՝ որ Ցուցահանդիսին մէջ իւրաքանչիւր քայլափոխին՝ զոր պիտի առնունք մեր հեռաւոր եւ մերձաւոր ընթերցողին հետ, ակներեւ պիտի տեսնուի Փրանկիսկոս Յովսէփայ գոնէ յառաջացուցիչ քաջալերութիւնն ու պաշտպանութիւնը։

Ցուցահանդէսը տեղաւորուած է ի Պրատէր, որ իւր սովորական հանդիսական տրամադրութեանց վրայ՝ աւելցուցած է Ցուցահանդիսի հրապոյրն ալ։ Տրամվայներն, ելեկտրակառքերն ու նորաշէն երկաթուղին ամէն կողմանէ ամէն օր կը բերէ 30—40.000 հանդիսատես, որոնց կը խառնուի տեղեկատուն ալ առաջնորդելու համար իւր ընթերցողաց։ Հարաւային դռնէն մտնելէն ետքը, մեր աչքը կը գրաւեն 3—4 պաւիլիոններ՝ բոսնիական զարդերով ու շէնքերով, բայց մենք կը փութանք մեր սրտին մերձաւորին, եւ անմիջապէս աջ դառնալով՝ 10 քայլ հեռու ծառազարդ անցքի մը մէջ կը նշմարենք երկոտասանասիւն անցք մը եւ կը դիմենք ներս։ Դռնէն իսկ կը կարդանք հայերէն տառերով գրուած «Մխիթարեան տպարան» վերտառութիւնը՝ $5^1/_2$ կանգուն բարձր տաճարանման պահարանի մը վրայ, իսկոյն կը գուշակենք, որ «Հայ արուեստը» ներկայացընող մասն այս է Ցուցահանդիսին։ 16 կարճ ու հաստ սիւնակներու վրայ բարձրացած է այս պահարանն, որուն չորս

երեսներն ալ ապակեայ կափարիչներու տակ՝ Վիեննական Մխիթարեան տպարանին տպագրութիւնները կը ներկայացնեն։ Բուն ճակատին վրայ՝ մասնաւոր պատրաստուած խորշի մը մէջ կանգնած է՝ Գեր. Այտնեանի եւ Գեր. Ա. Պալճեանի յօրինած մեծ երկրագունդը, որ 50 տարի ետքը (այսօր) դեռ զարմանք կը պատճառէ այցելուաց արուեստին նրբութեամբը։ Թէպէտ այցելուաց շատ քիչերը կրնան գունդին վրայի քաղաքներու հայերէն անունները կարդալ, սակայն մեծն ու փոքրն առանց ակնարկ մը նետելու եւ գոնէ վայրկեան մը զննելու յառաջ չ'երթար[1]։ Առաջակողմեան երկու եզրանկիւնները կանգնած են երկու փոքր գունդերը՝ նոյնպէս հայերէն տպագրութեամբ, երկնագունդն ու երկրագունդը, որոնք մէյ մէկ պահապան ունին, ահաւոր — փայտաքանդակ առիւծներ գրգռուած վիճակին մէջ, միշտ պատրաստ՝ կարծես, հայ գունդերը շօշափողին մահ սպառնալու։ Մեծ երկրագունդին քովերը՝ ապակիներու տակ ի ցոյց դրուած են հայերէն աշխարհագրական ատլասներ. աջակողմեան գունդին կից երեսին վրայ՝ մեր տպարանն այսօր տպագրուող 24 լրագիրներն ու պարբերագիրներն, որ շարուած են "Հանդէս Ամսօրեայի„ շուրջը, եւ իւրաքանչիւրը զարդարուած է կամ յոբելեարին պատկերովն եւ կամ յարմար դրուագով մը։ 12 սիւներու վրայ կը բարձրանայ պահարանին երկրորդ յարկը, որ ապակեայ դարաններու մէջ կը պարունակէ այլ եւ այլ լեզուաւ եղած տպագրութիւնները՝ փառայեղ կազմով։ Սիւներու խոյակներն իբր պատուանդան կը ծառայեն 4 եռանկիւններու, որոնց անկիւնախորշերու մէջ զետեղուած են՝ Վիեննական Մխիթարեանց Աբբահարց յատուկ զինանշանները։ Ամէնէն ծայրը կը տեսնուի 8 սիւներու վրայ բարձրացած գմբէթ մը, հայրապետական զարդախաչով պսակեալ։

Ոչ թէ միայն պահարանին շէնքը, այլ նաեւ ներքին ալ ըստ ամենայնի ձեռագրաց մանրանկարներու համապատասխանող գոյներով յօրինուած է, եւ այս երկրորդ յատկութեամբը կը ներկայանայ պահարանն իբրեւ գեղեցիկ գործ մը հայկական արուեստի եւ ամէն իրազեկ արուեստագէտներու հաւանութեան արժանացած է։ Պահարանիս պատկերը կը դնենք այստեղ։ „Graphisches Centralblatt“ մասնագիտական թերթն այս պահարանի մասին կը գրէ. (Թ. 12, 1898) "Այս փառայեղ պահարանը Վիեննայի Յոբելեանի-ցուցահանդիսին մէկ զարդն է։„

Բայց մինչ ոմանք դեռ ակնապիշ կը հային պահարանին, մենք շրջան մը կ'ընենք զմեզ պաշարող ցուցադիրներու արդիւնագործութեանց։ Մեր սրահին ձախակողմն է Angerer & Göschl հանրածանօթ զինկագրական տունը, որ որմայեց պահարանի մը վրայ ի ցոյց հանած է իւր յաջողութիւնները, որոնցմէ կը յիշենք միայն՝ գրեթէ 1·20 մետր երկայնութեամբ եւ 0·80 սանտմ. լայնութեամբ զինկատիպ լուսագրութիւնն, որուն մեծութիւնը մինչեւ հիմայ իւր նմանը կ'որոնէ արուեստակցաց մէջ։ Սրահին մնացեալ անկիւնները գրաւած են այլեւայլ լուսանկարիչներ եւ տպագրիչներ։

Դէպ ի աջ կը բացուի երկայն նեղանցք մը, ուր շարուած են տպագրական նորագոյն մեքենաներ, գրաշար գործիքներ (հինն ու նորագոյնը), որ բաւականէն աւելի զարմանք կ'ազդեն թէ ինչ նրբամիտ հնարքներու տակ է մարդկային ըղեղն ու գործունէութիւնը։ Թղթի գործատանց, կազմարարներու, բնագիտական գործիքներու եւայլն երկայն ու շքեղ շարքերն հաբեւանցի տեսութենէ մ'անցընելով, մեր տաճարին մեծ դռնէն կ'ելլենք՝ միւս տաճարներն ալ այցելութիւն մը տալու։

Գլխաւոր պողոտային վրայ (Avenue) մեր ձախակողմը կանգնած է Վիեննա քաղքին յատուկ պաւիլիոնն, որ շատ հրապուրիչ է իւր քնքուշ ու գողտրիկ շինութեամբը։ Հոս կարելի է Վիեննա քաղքին՝ առաջին սկզբնաւորութիւններէն մինչեւ արդի ժամանակներս առած հսկայական զարգացումը՝ կանոնաւոր կարգաւ տեսնել։ Այլեւայլ սրահներու մէջ՝ պլաստիկ պատկերներով, քանդակներով, թռչնահայեաց լուսանկարներով, եւայլն եւայլն մայրաքաղաքի մը գլխաւոր տեղերը, քաղաքապետական արուեստանոցները, սպանդանոցներն ու հացագործարանները, հաղորդակցութեան դիւրութիւններն եւայլն շատ մանրամասն պատկերացուած են։

Մեր մտած դռնէն ելլելով կը դիմենք տաբադէմ՝ դիմացի շէնքը, որ ահագին տարածու-

[1] Իբր հետաքրքրական պարագայ մը կ'ուզենք յիշել հետեւեալը։ Այցելութեան մ'առթիւ այս երկրագնդին քով նշմարեցինք 3 բարձրաստիճան սպաներ՝ իրենց ընտանեօք։ Խառն բազմութեան մէջ առանց նշմարուելու՝ հետաքրքրուեցանք լսել այս անձանց խօսակցութիւնը։ Օտարներէն մին՝ իբր իրազեկ, կը մեկնէր իւր որդւոց եւ տիկնոջն այս փոխոտ (zähes) ազգին ներկայացուցիչներու ... աշխատութիւնները„ եւ երկրագնդին վրայէն համառօտիւ աշխարհագրութեան դաս մը կու տար՝ պատմելով մանաւանդ վերջին դէպքերը. յուզիչ շեշտով մը „armes, unglückliches Volk!“ բացագանչութիւնն յուզեց իւր ունկնդիրները...։ Արդեօք օրը քանի՞ անգամ կը կրկնուին այսպիսի խօսակցութիւններ։

digitised by A.R.A.R.@

թեամբը կը պարունակէ մարդուս կենաց՝ իբր ֆիզիկական կեանք նկատելով, ամէն շրջանները, ցաւերն (հիւանդութիւններ) ու ուրախութիւնները։ Հիւանդութեանց բաժնին մէջ ապշութիւն կը պատճառեն մարդուս՝ նորագոյն գիտութեան՝ յիմարաբուժութեան մէջ յառաջ բերած բարւոքումները։ Հին-բարբարոսական մեթոդներու քով շինուած են՝ թէեւ շատերն en miniature, յիմարներու համար յատուկ պարտէզներն, լայնանիստ սրահներն, զբօսավայրերը, գործատեղիներն եւայլն, եւ մարդկութեան ամէնէն ցաւալի արարածներու՝ մտաւոր հիւանդութեամբ տառապողներու, ձեռաց աշխատութիւնը տեսնելով, չի կրնար մարդ համոզուիլ թէ այդպէս յառաջադէմ ըլլան այս խեղճերն ալ ձեռագործին մէջ... Պժգալի է տեսարանն ու սրտաճմլիկ. կ'անցնինք ուրիշ սրահ մը, ուր կան գիզուած մարդկային բարօրութեան համար եղած գիւտերը։ Բարօրութիւն եւ առողջութիւն քովէ քով նստած՝ ամէն կարելի երեւոյթներով կը ներկայանան այցելուներու։ Զատ պաւիլիոն մը կանգնուած է ոստիկանական կարգադրութեանց, մարդկային յանցանաց ու օրինազանցութեանց։

Այս գլխաւոր պողոտային վրայ եղած մեծ ու պզտիկ տաճարներն ու զարդարուն շէնքերը մէկ անգամէն անկարելի է աչքէ անցընել, եւ կը ստիպուինք կողմնակի անցք մը մտնել, բայց դէպ ի վար՝ փոքրիկ սիրուն ճարտարապետական շէնք մը, որուն կրկին դռներէն մէկն այցելուները կ'ընդունի, իսկ երկրորդը՝ դուրս կը հանէ, կը հրաւիրէ զմեզ ալ, եւ յանկարծ կ'ապշինք, որ հոյսս մը գիւտն՝ անցնելով դրամատէրերու ձեռքն այսչափ մեծ յառաջադիմութիւն ըրած ըլլայ. մեծ բան մը չէ գիւտը, սակայն միլիոնատէր ըրած է գիւտը գտնողը. Zacherle անուամբ մեծ տունն 15—20 տարի յառաջ գնած է պոլսեցի հայէ մը՝ միջատասպան փոշի մը, որ իւր անվրէպ ազդեցութեամբն ամէն տուն մուտք է գտած, եւ հիմայ գորգեր ու կապերտներ, հանդերձեղէններ ու կահ կարասիք պահելու համար, 3—4 մեծամեծ պահեստներու հիմ դրած է այս հասարակ փոշին, որ հազիւ օրապահիկը կ'ապահովէր հնարող հայուն....։

Վերջապէս կողմնակի անցքին մէջ կը նշմարենք վաղածին տղոց զարգացման տալու նորանոր գործիներն ու կազմածներն եւ հարկաւ զարմանք չէ, եթէ ըսենք թէ չափահասներու հետաքրքրութիւնը կը գրաւէ ամէնէն աւելի այս ընդարձակ շէնքը։ Ճիշդ դիմացը կայ „Flamme“ (բոց) ընկերութեան փոքրիկ մէկ շէնքը, ուր en miniature հնոցի մը մէջ դիակիզութիւնը (մեռելներն այրելը) կը մեկնուի, փորձով կը ցուցուի եւ գաղափարը պաշտպանելու եւ տարածելու համար՝ շաղակրատ հրեայ մըն ալ



Ժ—ԺԵ ԴԱՐՈՒ ԲՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃՈՎ ԳԱՀԱՐԱՆ
(ցուցադրեալ ի Վիեննական Մխիթար. Վիեննայի Ցուցահանդիսին մէջ)։

իւր "աղաղակողի„ դերը շատ լաւ կը կատարէ...։

Այս կողմնակի փողոցէն յառաջ չենք երթար, այլ ետ կը դառնանք, Rotunde = Բոլորշէն՝ ըսուած երկաթեայ հաստատառոյց շէնքը մտնելու, ուր՝ եւ 8—10 կողմնակի ժամանակաւոր կից շէնքերու մէջ, կը ներկայանան արուեստները, ճարտարապետութենէ ու մեքենագործութենէ սկսեալ մինչեւ ամենէն հասարակ համարուած արուեստը։ Բնական է կանայք կը դիմեն իրենց սիրելի բաժինը՝ մետաքսեղէնաց փառաւէտ վայրը, որ իւր շքեղութեամբը կը հրապուրէ — նոյն իսկ ակամայ — միւս սեռն ալ...։ Հիացումներ, ծանօթագրութիւններ եւն, մէկ կողմանէ, իսկ միւս կողմանէ՝ երկիւղած հրապոյրքի մը հետ, մտած տեղէն շուտով դուրս ելլելու փափաքը շատ դիւրաւ կը տեսնուի՝ երկու սեռերու դէմքերու վրայ ալ որոշակի...։ Քանդակագործութիւնը ստուգիւ հրաշակերտներ կը ներկայացընէ այս բաժնին մէջ, այն մարմարեայ նրբաքանդակ արձանները՝ ծիծաղկոտ ու լալկան, շատ կը յիշեցընեն մարմարի հայրենիքը...։ Ելեկտրականութիւնն եւ մանաւանդ մեքենագործութեան յաղթականոյց մեքենաներն ու — աղմուկը շուտով կը մղեն այցելուները դէպ ի փոքրիկ բաժանում մը, ուր 50 տարուան մէջ եղած յառաջադիմութիւնը՝ գոնէ մէկ ճիւղի մէջ, շատ շօշափելի եղանակաւ մեր առջեւ կը պարզուի, եւ անհատական դէպքէ մը՝ ընդհանուրին վրայ որոշ գաղափար կու տայ։ Փոքրիկ սրահի մը մէջ զետեղուած է ոստայնանկելու գործիք մը՝ զոր կը վարէ՝ ստուգիւ 1848էն մնացած ծերուկ մը, որ հազիւ ժամանակ կը գտնէ՝ կկոցն գրեթէ 1 վայրկենի մէջ աջէն ձախ անցընելու եւ խառնակոյտ թեզաններու եւ առէջներու ծայրէն գծակերպ լայնութեամբ կտաւի շերտ մը նիւթելու... Եւ երբ մտածենք թէ այս նահապետական եղանակը դեռ կը տանջէ մեր երկիրներու պապերն ու մամիկները, համբերութեան սիրուն օրինակ մը կ'առնունք։ Բայց մեր ժամանակակից յառաջադիմութեան քայլերն այս ճիւղին մէջ ալ նկատել կ'ուզենք, կ'անցնինք սրահին միւս կողմը, ուր դեռահաս մանկամարդ մը կը շարժէ ելեկտրական գործին եւ մեր յառաջուան տեսած փայտեայ կկոցն՝ պողպատեայ նաւակի մը ձեւն առած, աջ ու ձախ կ'արշաւէ՝ առէջներուն մէջէն կը մտնէ, թեզանները կը քաշէ իւր ետեւէն եւ մէկ վայրկենի մէջ առնուազն 10 շարժում կ'ընէ...։ Ի՜նչ դիւրութիւն եւ ի՜նչ վաստակ։ Նոյն սրահին մէջ հասարակ դերձակի մը մկրատ շարժելուն քով կը տեսնենք զգեստի գործատանց en gros կարուձեւը. 20—30 բաճկոն մէկ անգամէն կը կտրուի ելեկտրաշարժ մեքենաներու միջոցաւ եւայլն։

Իւր ամէն մասանց մէջ շրջելէն ետքն՝ այս շէնքէն կ'ելլենք եւ կը դիմենք Urania ըսուածն, ուր կը գոհանայ մեր գիտնական փափաքն ալ, քանի որ արուեստաւոր չենք։ Ամէն օր պատկերացոյց լուսով կը մեկնուին ծովու եւ ցամաքի, երկնից ու երկրի շարժումները, մեծ ճանապարհորդութիւնները՝ դէպ ի հիւսիս եւ հարաւ եւայլն։ Դաստիարակութեան վերապահեալ յարկածածուկ ընդարձակ սրահին մէջ՝ որ Jugendhalle անունն առած է, մի առ մի ցուցադրուած են մանկավարժութեան վերաբերեալ օգնական միջոցներն, եւ ամէն օր այլեւայլ դպրոցի աշակերտներ իրենց գործածածներն ու սորվածներն ցոյց կու տան հոս այցելուաց, ո՛չ թէ իբր պարզ քննութիւն մը, այլ իբրեւ կենդանի օրինակ մանկավարժութեան եղանակներու եւ միջոցներու։ Շատ հրահանգիչ է այս մասը։ Ասոր կարելի է կցել նաեւ օդապարիկներու պալլոնը, ուր ամէն օր կապուած եւ արձակ օդապարիկներ երկինք կը սրանան։

Բնական է ամէն շէնքերն ալ այց ելլելու ժամանակ չենք գտներ, ուստի եւ կը հրաժարինք այս անգամ երկրորդ ու երրորդ պողոտայի այցելութենէն, ուր կան մասնական ցուցադրութիւններ՝ երկրագործական, գիւղատնտեսական, խոհակերական, ջրաբաշխական եւայլն նորանոր դիւրութեանց ու յառաջադիմութեանց։ Բայց քանի որ Գերմանացիք մեծ հաճոյք կը զգան ի տես իրենց համբաւեալ գարեջրոյ տակառին, մասնաժողովը մոռցած չէ՝ անհամար պանդոկներու շարքին մէջ ընդունելու՝ տակառ-պանդոկը. պանդոկ մը՝ որ տակառի ձեւ ունի, եւ տակառ մը որ պանդոկ է...։

Հրաշակերտներու այս մասնական ժողովածոյքէն կը մեկնինք՝ խառնուելով հազարաւոր այցելուներու բանակին մէջ, բայց երկու խորհուրդ միշտ կ'ընկերանայ այցելուին. նախ, եթէ այսպիսի մասնական ցուցահանդէս մը այսչափ կը յափշտակէ զմարդ, ի՞նչ պիտի ըլլայ համազգային ցուցահանդէսն, որ 1900ին պիտի բացուի ի Պարիս. եւ երկրորդ, ո՞ւր են մեր մէջ այսչափ անթիւ ու անհամար արուեստներու, եւ արուեստագործութեանց ներկայացուցիչները...։ Մի՞թէ քի՞չ յաջողակ է արեւելեան ժողովուրդն յառաջադիմելու գրեթէ ամէն ճիւղի մէջ, բայց ո՞ւր են դիւրութիւններ, ո՞ւր են միջոցներ, ո՞ւր են

digitised by A.R.A.R.@

օրինաւոր յառաջացուցիչ թեւարկութիւններ...։ Սակայն մենք մեզի կը պահենք այս խորհրդածութիւնները, յուսալով որ ապագան — ո՜հ այս խաբեպատիր բառը — իրագործէ մեր յոյսերն ու բաղձանքները։ ՏԵՂԵԿԱՏՈՒ

## ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՆՈՑՆ Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Զմիւռնիացի հայն վերջի դէպքերու առթիւ ազգին մեծամեծ կարօտութեանց մէջ ի մխիթարութիւն անոր՝ իւր լումայն նուիրելով, ցուցուց որ բնական գաւառին պէս պտղաբեր, բուխ սիրտ մ'ունի։ Արդարեւ ժամանակք եղան որ ամիսն մէկ երկու անգամ այլեւայլ բարեբարական վախճաններու համար դրամաժողովներ եղան, Զմիւռնիացին իւր ազնիւ սրտովն եւ առատատուր ձեռօքն ամենուն մասնակցեցաւ[1]։

Բայց այս ամէն ձեռնարկութեանց մէջէն ներսեսեան Որբանոցը՝ Զմիւռնիայի հայուն բարերարութեանց կոթողն ըլլալու պատիւն ունեցաւ։ Այս հիմնարկութիւնը 1897 Մարտ 30ին՝ քաղքիս երիտասարդաց խմբի մը կողմանէ հիմնուեցաւ։ Ընկերութեան անդամք հիմայ կը հասնին 28ի, բայց ըստ կանոնադրութեան մինչեւ 50 (!) կրնայ բարձրանալ։ Անդամք քուէով կ'ընտրուին, որոնք ընդհանուր ժողովն կը կազմեն, այդ ընդհանուր ժողովը կ'ընտրէ գործադիր ժողովոյ անդամները, թւով 9 հոգի, եւ այս ինն հոգւոյ ձեռքն է ամբողջ որբանոցի վարչութեան գործը։ Այդ երկու ժողովներն ալ ունին իրենց Ատենապետն եւ Ատենադպիրը։ Գործադիր ժողովն՝ յօգնութիւն իւր գործոյն, ընտրած է 10 խնամակալ տիկնայք, որոնց մայրենի խնամոցն յանձնուած է որբանոցի մաքրութեան, հանդերձեղինաց եւ կերակրեղինաց հոգը։

Որբանոցի ընկերութեան վախճանն է, անտուն եւ անտէր մնացեալ որբեր ժողովել, անոնց ազգային կրթութիւն մը տալ եւ իրենց ապագային համար ապրուստի միջոց մը հայթայթել եւ յաւարտ իւր գործունէութեան շրջանին՝ զանոնք իրենց հայրենիքը դարձնել։

Այդ ազնիւ երիտասարդք իրենց ձեռնարկութեան քաջալերիչ շարժառիթ լոկ եւ միայն հայուն բուխ սիրտն ու առատատուր ձեռքն ունեցած են. եւ ահա այսօր այդ բարերական յարկին տակ 36 որբ տղաք կը պատսպարին։ Որբանոցի եկամուտքը կը կազմեն տարեկան եւ ամսական բաժանորդագինք, նուէրք, ի նպաստ որբանոցի տրուած հանդէսներու մուտքն եւ վիճակահանութիւնք։ Ահա այդ աղբիւրներովն է որ որբերն հոս խիստ լաւ հոգացողութիւն մը կը վայլեն։ Կերակուրն, հագուստն, ինչպէս նաեւ ննջարանք, խիստ լաւ վիճակի մէջ են. տղոց երեսէն արդէն կը տեսնուի իրենց խնամակալ պարոններէ եւ խնամակալուհի Տիկնանցմէ ճշմարիտ հայրական եւ մայրական խնամք ու-սէր վայելելը։

Որբանոցն ընդարձակ եւ օդաւէտ պարտէզով շէնք մըն է։

Հոս իսէր ճշմարտութեան ըսել պարտական ենք որ մեր կատարած մէկ այցելութենէն խիստ գոհ մնացինք։ Պատուարժան խնամակալութիւնն իւր որբերն մեզի ներկայացուց, որոնցմէ մին խիստ զգայուն կերպով սրտաճմլիկ բանաստեղծութիւն մը արտասանեց։ Մեր խորին գոհունակութիւնն եւ շնորհակալութիւնն այդ ազնիւ եւ եռանդուն երիտասարդներու յայտնելէ վերջ, կը խնդրենք ազգայիններէ որ այդ ճշմարիտ քրիստոնէական բարերարութեան գործն ինչպէս մինչեւ հիմայ, նոյնպէս ասկէ վերջ իրենց լումաներով քաջալերելէ ետ չկենան։ Աղէկ է սկիզբն, եւ կ'ապահովցընէ աղէկագոյն շարունակութիւն մը, բայց ամէնէն աղէկ պէտք է ըլլայ կատարածը, որ կախում ունի անընդհատ քաջալերութենէ։

*Զմիւռնիա, 26. Յունիս 1898:* Հ. Ա. Ս.

[1] Մինչեւ տղաք մէջերնին ընկերութիւն կազմեցին եւ իրենց զուարճութեանց յատկացեալ դրամէն շաբաթականներ ժողվելով՝ գումարը բարերարական վախճաններու նուիրեցին։ Դարձեալ մասնաւոր յիշատակութեան արժանի է երիտասարդաց ընկերութիւն մը, որոնք իրենց վաստակոց երախայրիքովն որբ մը կը հոգան, եւ իրենց առաջին նուէրը՝ մեր իսկ ներկայութեամբ նուիրեցին։ Կը քաջալերենք եւ կը յորդորենք զիրենք քրիստոնէական սիրոյ այս "բարձրագոյն գործին" մէջ յառաջանալ։

## ԱՅԼԵՒԱՅԼՔ

—

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

106. *ՍԵՆԿԵՒԻՉ Հ. — Ու՞ր երթաս.* Quo vadis? *Վէպ Ներոնի ժամանակից: Լեհերէնից թարգ. Ստ. Լիսիցեանց, Թիֆլ. Մ. Դ. Ռոտինեանց 1898: Մեծ 8° Ը+736 էջ: Գինն՝ րբ. 1.50: (Թ. Հյ. Հրատ. Ընկ.* Nr. *144:)*

107. *ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ երկասիրութիւնները Հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան մասին (1840—1855 թթ.): Հայկաքանի մի պատկերով եւ կենսագրութեան նիւթերով: (Խմբագրութեամբ Գր. Խալաթեանցի:) Մոսկուա, Վառվառէ Գատցուկ, 1898. 8°, Ը+272 էջ: Գինն՝ րբ. 1.50:*

digitised by A.R.A.R.@